# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ ԺԲ. — ՇՐՋԱՆ Է. **1874** ՏԱՐԻ Է. — ԴԵԿՏԵՄԲԵՐ 31


## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

*Արարատ Ամսագրոյս Է-րդ շրջանը ներկայ Թուովս աւարտեցաւ, և յառաջակայ 1875 ամի Յունվար ամսէն պիտի սկսանի Ըրդն:*

*Արարատայ պարունակութեանց ծրագրին, թերթից քանակութեան և բաժանորդագնոյն վերայ ոչինչ փոփոխութիւն եղած չէ և կմնան միևնոյն:*

*Կյուսամք որ՝ Արարատ Ամսագրոյս ցարդ ցուցած արդիւնքն ապագայ ընթացիցն համար ևս գրաւական տալոյ բաւական լինելով, ցարդ նուիրուած միևնոյն սէրը և համակրութիւնը՝ զոր յԱզգայնոց միշտ վայելած եմք՝ դարձեալ պիտի վայելեմք, որում ևս գրաւական եղած է և պիտի լինի բաժանորդաց հետզհետէ յաւելանալն:*

*Այս առթիւ քաղցր պարտիք կզգամք մեր շնորհակալիքը նուիրել Արարատ ամսագրոյս աջակից և արդիւնաւոր գործակալաց և ընթերցասէր Բաժանորդաց, խնդրելով միանգամայն՝ զի եթէ խմբագրութեանս կողմանէ ակամայ պակասութիւն ինչ պատահած է, սիրով ներողամիտ լինին:*